# ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# «ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РА
"ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ КАМЕРНЫЙ ТЕАТР" ГНО

MINISTRY OF CULTURE OF THE RA
"THE STATE CHAMBER THEATRE OF YEREVAN" NCSO

Երևան- 0009, Մաշտոցի պող. 58 հեռ. (+37410) 56 60 70, 58-78-44 ֆաքս 56 63 78
Ереван- 0009, пр. Маштоца, 58 тел. (+37410) 56 60 70, 58-78-44 факс 56 63 78
Yerevan-0009, 58 Mashtots ave. tel. (+37410) 56 60 70, 58-78-44 fax 56 63 78
E-mail: info@erkat.am ; chamber_theatre@mail.ru ; www.erkat.am


No ԿԹ-50
25.04.2014 թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
**carayutyun-11-2@shh.gnumner.am**

Հարգելի մասնակից

N **<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2>>** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու "Գնումների աջակցման կենտրոն" ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ։ Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **<<ԵԿՊԹ-ՇՀԾՁԲ-14/1>>**։

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Մաշտոցի պող. 58 շ. հասցեով մինչև 2014թ-ի մայիսի 7-ը, ժամը 14:00-ն։ Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Սանթուրյանը։

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը։։

Հայտերը կբացվեն <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում՝ ք. Երևան Մաշտոցի պող. 58 շ. հասցեում՝ 2014թ. մայիսի 7-ը, ժամը 14:00-ին։ Գնման առարկա է հանդիսանում՝ <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ կարիքների համար **ավիասպասարկման ծառայությունների** ձեռքբերումը։

<<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) պայմանագրի նախագծի N 1 հավելվածում։

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված 2)։ Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով։

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **NԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով։

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը։

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ։

<<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ chamber_theatre@mail.ru ։

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

<<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ

տնօրեն՝ Ա. Երնջակյան

Հեռախոս՝ 010566070